գր. 16.10.2014թ.
կոդ՝ 10814442

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

09 հոկտեմբերի 2014 թվականի N. 137-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-Ի №53-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 24-ի 1036-Ն որոշման 2-րդ կետը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 2010թ. ապրիլի 15-ի <Հանրապետական երկրաբանական ֆոնդ> պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից տրամադրվող ծառայության գները հաստատելու մասին> N53-Ն հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Հրամանի՝

ա. նախաբանում <2004թ. մայիսի 6-ի <Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին երկրաբանական և այլ տեղեկատվության պահպանության կարգը սահմանելու մասին> N 669-Ն որոշման 3-րդ կետի <ա> ենթակետով> բառերը փոխարինել <Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 24-ի <Երկրաբանական տեղեկության տրամադրման, ինչպես նաև դրա հետ կապված

մատուցվող ծառայությունների դիմաց վճարման կարգը սահմանելու մասին> N 1036-Ն որոշման 2-րդ կետի> բառերով,

բ. 1-ին կետում </10.04.2010թ. N 4/45-1/1907-10 գրություն/> բառերը փոխարինել </ 15.06.2012թ. N 4/4.5-1/7965-12/ գրություն > բառերով,

գ. հրամանով հաստատված հավելվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության իրավաբանական բաժնի պետին՝ սահմանված կարգով ապահովել հրամանի ներկայացումը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի վարչության պետին:

ԵՐՎԱՆԴ ԶԱԽԱՐՅԱՆ

Հավելված
ՀՀ էներգետիկայի և բնական
պաշարների նախարարի
2014թ. հոկտեմբերի 9-ի
№137-Ն հրամանի

ԳՆԵՐ

<Հանրապետական երկրաբանական ֆոնդ> պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից տրամադրվող ծառայությունների

Հ/հ	Ծառայության անվանումը	Չափման միավորը	Մատուցվող ծառայության գինը (ներառյալ ԱԱՀ), դրամ
1	2	3	4
1	Երկրաբանական ֆոնդի ընթերցասրահում ֆոնդային նյութերի տրամադրում	Մեկ ֆոնդային նյութ / օր	4500
2	Երկրաբանական ֆոնդում առկա ընդերքի մասին տեղեկության վերաբերյալ		
	ա/ փաստաթղթերի պատճենահանում կամ սկանավորում կամ տպում		
	A_4	յուրաքանչյուր էջի համար	50
	A_3	յուրաքանչյուր էջի համար	75
	A_2	յուրաքանչյուր էջի համար	150
	A_1	յուրաքանչյուր էջի համար	500
	A_0	յուրաքանչյուր էջի համար	600
	բ/համակարգչային սկանավորում	1 քառ. Մ	1660
	գ/ համակարգչային տպում	1 քառ. Մ	3545